«Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ»
պետական հիմնարկ
"Environmental project implementation unit"
state institution
"Бюро по реализации экологических программ"
государственное учреждение

0005, ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա
65 A. Tigran Mets Ave., Yerevan, 0005, Armenia
0005, Пр. Тиграна Меца 65 А, Ереван, Армения
☏(+ 37410) 651-631
Էլ.փոստ /E-mail/ эл. почта info@cep.am

№ 1-06/27Ա/272

«02» հուլիսի 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թ. Հունվարի 13-ի N 9-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 35-րդ կետի 11-րդ ենթակետը՝

ՊԱՐԶՎԵՑ

Շրջակա միջավայրի նախարարության «Բնական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Արսեն Սիմոնյան» ԱՁ -ի միջև կնքած «ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԾՁԲ-24/32» ծածկագրով պայմանագրի շրջանակումներում Պետական վերահսկողական ծառայությանը (այսուհետ՝ Ծառայություն) հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Պրոդեֆորմ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 06961109) 2023 թվականի մարտի 3-ից մինչև 2025 թվականի մարտի 3-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: «Արսեն Սիմոնյան» ԱՁ-ի և «Պրոդեֆորմ» ՍՊ ընկերության միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ Ընկերության 100% բաժնեմասի սեփականատեր Արսեն Համլետի Սիմոնյանը հանդիսացել է նաև «Պրոդեֆորմ» ՍՊ ընկերության տնօրեն, ուստի հաշվի առնելով վերոգրյալը «ՀՀ-ԲԾ-

Ա-ԳՀԾՁԲ-24/32» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծվել է և 21.06.2024թ. Պայմանագիր լուծելու մասին հայտարարությունը հրապարակվել է տեղեկագրում: Այդ փաստի մասին ծանուցվել է «Արսեն Սիմոնյան» ԱՁ-ին և առաջարկվել է վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները: Սակայն տրված ժամկետում ընկերությունը չի վճարել վերոնշված գումարները:

Հիմք ընդունելով իրավական և փաստական հանգամանքները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Արսեն Սիմոնյան» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Որոշումը տրամադրվում է Լիազոր մարմնին (ՀՀ ֆինանսների նախարարությանը) վերոնշված ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար

«ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Արմեն Եսոյան

Կատարող՝
ԲԾԻԳ ՊՀ-ի գործերի կառավարման և
գնումների բաժնի պետ
Ժաննա Դադիյան
(+37410) 651-631